

ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱ

ՆԵՐՔԻՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԲԱՆԱԿԱՆ ՇԵՐՏԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԴԻԱՏԵԲՍԵՐՈՒՄ

ԴԱՎԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Լրագրագիտության մեջ արժեքանական խնդիրները շարունակում են հետաքրքրել հետազոտողներին: Դրանք դիտարկվում են տարբեր տեսանկյուններից, որոնցից յուրաքանչյուրը, բացահայտելով ժուռնալիստիկայի և արժեքանության փոխհարաբերության այս կամ այն կողմը, ընդլայնում է երկու գիտակարգերին բնորոշ թեմատիկ, բովանդակային ու ժանրային ոլորտների ուսումնասիրությունը¹: Ժուռնալիստիկայի համատեքստում արժեքանական խնդիրների քննությունը մենք փորձել ենք վեր հանել մեդիատեքստ-մտավորական լսարան երկխոսային դիսկուրսի շրջանակներում: Դրանց հաճախ կարելի է հանդիպել մշակութային պարբերականներում, որոնցից հետազոտության համար ընտրել ենք երկուսը՝ magaghat.am կայքը և «Ազգ-Մշակույթ» հավելվածը:

Magaghat.am-ը էլեկտրոնային կայք է, հիմնադրվել է 2013 թվականին բեմադրիչ Արման Հովհաննիսյանի և իր կնոջ նախաձեռնությամբ: Բաժինները տարողունակ են, ընդգրկում են մշակույթի և արվեստի տարբեր բնագավառները: Կայքն ունի «մի թիմ, որը հետաքրքիր ու ազգաշահ հրապարակումներ է հեղինակում, հետազոտություններ անում, հարցազրույցներ վարում, հոդվածներ տրամադրում: Ներկայացվում է նաև օրվա պատմամշակութային լրահոսը, որով շատ ընթերցողներ են հետաքրքրվում»²:

«Ազգ» թերթի մշակութային հավելվածը (գլխավոր խմբագիր՝ Հակոբ Ավետիսյան) հրատարակվում է 2006 թվականից տպագիր և էլեկտրոնային տարբերակներով: Որպես կայք՝ առաջին տարիներին տպագրվում էր վեց լեզուներով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, թուրքերեն, արաբերեն, պարսկերեն: Թերթն ունի 70 երկրների շուրջ հինգ հազար օգտատերեր³:

¹ Տե՛ս մասնավորապես **Ремизов В. А.** Культура личности (ценностно-мировоззренческий анализ). М., 2000, **Ерофеева И. В.** Аксиология медиатекста в российской культуре (ценностная рефлексия журналистики начала XXI века). Чита, 2009, **Сидоров В. А., Ильченко С. С., Нигматулина К. Р.** Аксиология журналистики. СПб., 2009 և այլն:

² <http://www.magaghat.am/2016/09>

³ Տե՛ս <http://www.azg.am/AM/culture>

Մեր հողվածի նպատակն է ներկայացնել մեղիատեքստին բնորոշ արժեքանական մի շարք առանձնահատկություններ հեղինակ-մտավորական լսարան ներքին երկխոսության համատեքստում:

1. Ներքին երկխոսությունը մեղիատեքստ-մտավորական լսարան փոխառնչություններում

Երկխոսության արժեքանական շերտերը հետաքրքիր դրսևորումներ են ստանում հատկապես այն դեպքերում, երբ խնդիրը դիտարկում ենք ժամանակի տարածքում: Այստեղ մշակութային երկխոսությունները հաճախ ձերբազատվում են ներկա, անցյալ, ապագա պայմանական բաժանումներից՝ ի հայտ բերելով մի շարք տարատեսակներ, մանավանդ որ մշակույթը « [...]անցյալ, ներկա և ապագա մշակույթները կրող մարդկանց համաժամանակյա կեցության և հաղորդակցության ձև է: Մշակույթը մշակույթ է դառնում միայն տարբեր մշակույթների այս համաժամանակյա հաղորդակցության մեջ»⁴: Մեզ տվյալ դեպքում հետաքրքրում է ներքին երկխոսությունը, որն ուզում ենք քննել Մ. Բախտինի նշած «մեծ ժամանակի» կամ Ֆ. Բրոդելի «երկար տևողության» չափույթում⁵:

Այսպես ուրեմն՝ մեղիատեքստի ներքին երկխոսությունը մշակութային ժամանակի մեջ: Ի՞նչ նկատի ունենք ներքին երկխոսություն ասելով: Ի դեպ, այս խնդրին հանգամանորեն անդրադարձել ենք մեր հողվածներից մեկում⁶:

Գեղարվեստական տեքստում (վեպ, վիպակ, պատմվածք), ինչպես հայտնի է, հերոսներն աստիճանաբար հեռանում են հեղինակից և ապրում իրենց ինքնուրույն կյանքով⁷: Մեղիատեքստերում թեև լրագրող հեղինակի սուբյեկտիվիզմն ակնհայտ է, այնուհանդերձ նրա ստեղծագործական **ես-ը նույնպես ներքնապես տրոհվում է**: Այս տրոհումը առաջ է բերում հնարավոր «գրուցակիցների» խումբ, որոնք, նախապես լինելով լրագրողի մտքում ու գաղափարներում, այնուհետև տեղափոխվում են նրա կողմից ստեղծվող տեքստային միջավայր և հասանելի դառնում արտաքին հասցեատիրոջը՝ ընթերցողին: Հնարավոր գրուցակիցները հեղինակից արտածված ներքին հասցեատերերն են, որոնք ստեղծում են նաև ներքին լսարան: Այլ խոսքով՝ հեղինակը «մինչև արտաքին հասցեատիրոջ հետ երկխոսության մեջ մտնելը սեփական խաղընթացի կանոններով ստեղծում է ներքին երկ-

⁴ «Диалог культур» // "Новая философская энциклопедия" // <http://iph.ras.ru/elib/0958.html>

⁵ Տե՛ս **Бахтин М. М.** Ответ на вопрос редакции "Нового мира" // **Бахтин М. М.** Собрание сочинений. Т. 6. М., 2002, էջ 454-457, **Ա. Մտեփանյան, Ե. Մարգարյան**, ժամանակի կառույցը Ֆ. Բրոդելի պատմահայեցողության ծիրում, «Պատմություն և կրթություն», Եր., 2005, № 1-2, էջ 33-42:

⁶ Տե՛ս **Ռ. Վ. Պետրոսյան**, Պատում, մեղիատեքստ, հակառակ հեռանկար, Եր., 2017, էջ 99-110:

⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 11-22:

խոսային հարաբերություններ»⁸, որտեղ մի կողմում ինքն է, մյուս կողմում՝ իր դիմակը (կամ դիմակները) այլ հերոսների տեսքով, որոնց անվանում ենք ներքին հասցեատեր կամ հասցեատերեր: Մրանք էլ իրենց հերթին ստեղծում են այն ներքին լսարանը, որի տարածքում ընթանում է ներքին երկխոսությունը:

2. Նամակը և էսսեն ներքին երկխոսության տարածքում

Մեր ընտրած կայքերում բազմաթիվ են այն հրապարակումները, որոնցում հեղինակը մտավորական լսարանին հրավիրում է ներքին երկխոսության այդ տարածքը: Որպես հետազոտության նյութ մենք ընտրել ենք magaghat.am-ից «Չարլի Չապլինի նամակն իր դստերը՝ Ջերալդինային»⁹, իսկ «Ազգ-Մշակույթից» Կ. Սուրենյանի «Չէ, օ, Տոլստոյ, չէ»¹⁰ էսսեն: Ե՛վ նամակը, և՛ էսսեն լրագրության այն ժանրերն են, որոնցում երկխոսության տարատեսակները տարբեր դրսևորումներ են ստանում: Նախ՝ սրանց մասին բնութագրական մի քանի խոսք:

Magaghat.am-ում տպագրված Չապլինի նամակը վաղուց հայտնի է ընթերցող հանրությանը: Մեծ դերասանն այստեղ բացահայտվում է որպես կյանքի ընկալման բարձր արժեքներով ապրող մտավորական, որին հուզում է ոչ միայն սեփական դստեր, այլև մարդկության վաղվա օրը: Չապլինի մտորումները, ներաշխարհային տազնապները հետաքրքիր շերտեր կարող են բացել նաև խնդիրը հոգեբանության, գրականագիտության դիտանկյուններից քննելիս, ինչը տվյալ դեպքում դուրս է մեր հետազոտության շրջանակներից:

Կ. Սուրենյանի էսսեում հայ մտավորականը «անմիջական» բանավեճի մեջ է մտնում Լ. Տոլստոյի հետ, թեև նրա էսսեն հրապարակվել է 21-րդ դարակգրին: Սուրենյանը չի ընդունում համաշխարհային արվեստի մի շարք ներկայացուցիչների (Շեքսպիր, հույն ողբերգակներ, Միքելանջելո, Բախ, Բեթհովեն, Բրամս, Վագներ և ուրիշներ) ստեղծագործությունների վերաբերյալ Տոլստոյի կարծիքները: Նա դիմում է ռուս գրողին «դու»-ով, մեջբերում մտքեր նրա հոդվածներից, կրոնական ուսմունքից, սեփական փաստարկումներով աշխատում հերքել նրա սուբյեկտիվ մոտեցումները:

Այժմ փորձենք համեմատական քննությամբ վեր հանել այն ընդհանրություններն ու տարբերությունները, որ նկատել ենք մեղիա-

⁸ Նույն տեղում, էջ 103:

⁹ «Չարլի Չապլինի նամակն իր դստերը՝ Ջերալդինային», <http://www.magaghat.am/2014/04/>

¹⁰ Կ. Սուրենյան, Չէ, օ, Տոլստոյ, չէ, «Ազգ-Մշակույթ», 14.07.2007, թիվ 14: Ի դեպ, այս էսսեն մենք վերլուծել ենք նաև մեր հոդվածներից մեկում (տե՛ս «Ценности национальной и глобальной культур: мастерство диалога» // «Медиаальманах», 2015, № 5, էջ 47-53), բայց այնտեղ մեզ հետաքրքրող խնդիրն այլ էր:

տեքստ-մտավորական լսարան ներքին երկխոսության համատեքստում նշված հրապարակումները վերլուծելիս:

Ընդհանուր կողմերը

1. Ե՛վ Չապլինի նամակում, և՛ Սուրենյանի էսսեում հեղինակները, իրենցից բացի, ունեն կոնկրետ ներքին հասցեատեր, որը նրանց երկրորդ դեմքն է և ներքին երկխոսության տարածքում ակնհայտորեն երևացող երկրորդ կերպարը: Չապլինի նամակում դա նրա աղջիկն է, Սուրենյանի էսսեում՝ այն պատանին, որ ինքն է տարիներ առաջ կամ այլ խոսքով՝ իր պատանեկան ես-ը:

2. Թեև նրանք ներքին երկխոսության մեջ ակտիվ չեն որպես գրուցակիցներ, սակայն հեղինակների կողմից լիցքավորված են արտաքին հասցեատիրոջը միտված դրական մեծ էներգիայով: Երկուսն էլ իրենց կերտած հեղինակների հենման կետն են և հույսի առանցքը գծային ժամանակով ապրող արտաքին աշխարհում:

3. Երկու հեղինակներն էլ իրենց գրույցի ընթացքում ստեղծում են ներքին լսարան, որը թեև պասիվ է, սակայն ակտիվացնում է հեղինակի խոհերի, մտորումների ընթացքը:

4. Այդ ներքին լսարանները երկու դեպքում էլ արժեքանական ուրուշակի չափումների դաշտ են ստեղծում՝ նպաստելով ներքին դիսկուրսի կայացմանը տեքստի ներսում:

Տարբերությունները

1. Չապլինի նամակում երկխոսությունն ընթանում է արվեստից դեպի կյանք տարածության մեջ, ինչը հեղինակին հնարավորություն է տալիս իմաստավորելու իր ապրած կյանքի փորձառությունը:

Սուրենյանը մղվում է արվեստից դեպի նույն այդ արվեստը՝ մտավորական լսարանի մասնակցությամբ:

2. Չապլինի դեպքում ժամանակային առումով երկխոսության վեկտորն ուղղված է անցյալից դեպի ապագա:

Սուրենյանի էսսեում երկխոսությունն ընթանում է հետադարձ ուղղությամբ՝ ապագայից դեպի անցյալ, որի ընթացքում հեղինակի հայացքը վերակենդանացնում է նաև անցյալի լսարանը:

3. Չապլինի երկրորդ ես-ը՝ աղջիկը, առավելապես լսողի դերում է: Նրա կերպարը հեղինակը բացահայտում է հիմնականում հոգեբանական նրբերանգներով:

Սուրենյանը, պատանու կերպարից բացի, ակտիվորեն խաղարկում է նաև իր մյուս ներքին ես-ի՝ Տոլստոյի կերպարը՝ ներառելով ռուս գրողի գեղագիտական հայացքները և հակադրելով դրանց սեփական փաստարկները:

4. Չապլինի նամակի ներքին լսարանը, աղջկա ակնհայտ կերպարից բացի, նաև թատերական հանրությունն է, որի առաջ էլույթ է ունենում Ջերալդինան, Փարիզի ծայրամասերում ապրող թշվառականները, թափառական ծաղրածուն, տաքսու վարորդը և ուրիշներ: «Դու պարում ես փառահեղ թատրոնի բեմահարթակի վրա,- գրում է Չապլինն աղջկան,- Ելիսեյան դաշտերում...Բարձրացիր այնտեղ, աղջիկս, բայց և վերադարձիր երկիր, դու պետք է տեսնես՝ ինչպես են ապրում մարդիկ, ինչպես են պարում այն ծայրամասերի փողոցի պարուհիները...»¹¹: Առանց այս լսարանի Չապլինի նամակը կգրկվեր նրա հուզական խոսքին կենդանություն հաղորդող անհրաժեշտ բաղադրիչներից:

Սուրենյանի էսսեում, պատանուց և Տոլստոյից բացի, ներքին լսարանի անդամներն են Տոլստոյի կողմից քննադատված արվեստագետները՝ նշանավոր գրողներ, երաժիշտներ, նկարիչներ: Ահա նրանցից մեկի բնութագիրը. «Արդ, բացատրի՛ր ինձ, քարոզի՛չ Տոլստոյ, ինչպես եղավ, որ քո...ասածներից ...անտեղյակ այդ տղան, որ ինքս էի, մի օր հանկարծ այնպես հուզվեց, երբ ձայնապնակից լսեց իր ականջին անսովոր մի երաժշտություն, որ իրեն թվաց, թե անգին գանձ է գտել... և այդ հրաշալիքն ստեղծել է մի մարդ, անունը՝ Բրամս: Այո, հենց այն Բրամսը, որի անունն էլ արհամարհանքով նշում ես, թվարկելով ուրիշ մեծ կոմպոզիտորների հետ»¹²:

Ներքին երկխոսության մեջ առկա այս երկխոսայնությունը, որ ի հայտ է գալիս հեղինակ-ներքին հասցեատեր-ներքին լսարան հարթակում, դառնում է այն շարժիչ ուժը, որ այնուհետև պիտի վերածվի հեղինակից և տեքստից դուրս երկխոսայնության, այս անգամ արդեն մեկ այլ համատեքստում, այն է՝ հեղինակ-արտաքին հասցեատեր-արտաքին լսարան:

Մենք ընդամենն ուրվագծեցինք մեղիատեքստերում առկա ներքին երկխոսության արժեքանական մի քանի կողմեր, որոնք հեղինակը խաղարկում է արտաքին լսարան դուրս գալու համար: Իսկ այստեղ արդեն արտաքին երկխոսությունը ենթադրում է մի շարք ուղղություններ.

Ա) լայն առումով մեղիատեքստի ընկալման հնարավորությունները արտաքին լսարանի կողմից,

Բ) հեղինակ-ընթերցող-քննադատ տրամախոսություն՝ յուրաքանչյուրն ընկալման իր նրբություններով,

Գ) կայքերում մեկնաբանություններ անող ընթերցողի ներկայություն, որի դեպքում արտաքին երկխոսությունը նույնպես կարող է վերածվել տրամախոսության և այլն:

Սրանք առավելապես բնորոշ են մտավորական լսարանի կողմից

¹¹ <http://www.magaghat.am/2014/04>

¹² Կ. Սուրենյան, «Չէ, օ, Տոլստոյ, չէ», «Ազգ-Մշակույթ», 14.07.2007, թիվ 14:

մեղիատեքստերի ընկալմանը, որոնք նմանատիպ արժեքանական դրսևորումներ կարող են ունենալ արտաքին երկխոսային դիսկուրսի տարածքում, ինչը մեկ այլ ուսումնասիրության նյութ է:

Ամփոփում

Մեղիատեքստերում առկա ներքին երկխոսությունը իր արժեքանական կողմերով ուսումնասիրվել է նամակի և էսսեի ժանրերի օրինակով: Այդ երկխոսությունը սկիզբ է առնում հեղինակից, որի **էս-ը** տեքստում տրոհվում է առաջ բերելով ներքին հասցեատերեր: Շատ այդպիսի ստեղծվում է յուրօրինակ թատերական միջավայր, որտեղ մինչև արտաքին ընթերցողի հետ հաղորդակցվելը նախապես փորձարկվում է հեղինակային սցենարը՝ իր և ներքին հասցեատերերի ու նրանցից կազմված լսարանի երկխոսային հարաբերություններով:

Չապլինի նամակում, հեղինակից և աղջկա կերպարից բացի, իբրև ներքին լսարան ուրվագծվում են մտավորական և ոչ մտավորական հանրությունները: Սուրենյանի էսսեում առաջին պլանում մտավորական լսարանն է, և երկխոսային խաղարկումները հիմնականում ընթանում են այս միջավայրում: Երկու տեքստերում առկա ներքին երկխոսություններին առանձնակի երանգ է հաղորդում ժամանակի գործոնը: Չապլինի գրույցը աղջկա միջոցով ապագայի հետ է, Սուրենյանի երկխոսությունը, ի դեմս Տոլստոյի, անցյալի:

Երկու հրապարակումներն էլ իրենց ընդհանուր և տարբերակիչ կողմերով ամբողջության մեջ ուշագրավ արժեքանական շերտեր են ի հայտ բերում մեղիատեքստի ներքին երկխոսության տարածքում:

Բանալի բառեր – *մեղիատեքստ, էսսե, նամակ, ներքին երկխոսություն, արժեքանություն, մտավորական լսարան, ներքին հասցեատեր*

ДАВИД ПЕТРОСЯН – *Аксиологические слои внутреннего диалога в армянских медиатекстах.* – В наши дни медиатекст остаётся в центре внимания исследователей. В круг актуальных проблем входят и аксиологические слои внутреннего диалога.

В медиатексте внутренний диалог начинается автором, «я» которого распадается, обнаруживая неких внутренних адресатов. Так создаётся своеобразная театральная среда, и через диалоги с внутренними адресатами подготавливается выход текста к внешней аудитории.

Письмо Чарльза Чаплина и эссе Карписа Суреняна в этом смысле типичны. Их сравнительный анализ выявляет ряд совпадений и различий, которые в целом открывают примечательные аксиологические пласты во внутреннем диалоге медиатекста с интеллектуальной аудиторией.

Ключевые слова: *медитекст, эссе, письмо, внутренний диалог, аксиология, интеллектуальная аудитория, внутренний адресат*

DAVID PETROSYAN – *The Axiological Layers of the Internal Dialogue in the Armenian Mediatexts.* – Nowadays, mediatext related issues continue to remain in the center of researchers' attention without losing their relevance. This context involves the study of the axiological layers of the internal dialogue.

In the mediatext the internal dialogue begins with the author, whose "I" splits in the text revealing internal addressees. The author thus creates a unique theatrical environment and, through dialogical relations with internal addressees, prepares the entry of the text to the external audience.

The letter of Ch. Chaplin and the essay of K. Surenyan are typical examples in this regard. The comparative analysis of these publications reveals a number of similarities and differences that generally reveal remarkable axiological layers in the internal dialogue of the mediatext-intellectual audience.

Key words: *mediatext, essay, letter, internal dialogue, axiology, intellectual audience, internal addressee*